

«Dasaxos.am ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ»

Պայմանագիրը սահմանում է Ձեր (դասուցույցի) և ԱՁ ՅՈՒՐԻՅ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, ՀՎՀՀ 20241495 (Սերվիսի) միջև իրավահարաբերությունների կանոնակարգման պայմանները: Սերվիսը չի երաշխավորում Ձեր կողմից պատվերների (հաճախորդների մասին տեղեկության) ստացումը, չի հանդիսանում Ձեր գործատուն կամ աշխատանքների և ծառայությունների պատվիրատուն: Ձեր մասին տեղեկությունը ներառվում է ընկերության տվյալների բազա:

Դուք կարող եք արձագանքել պատվերներին և ծառայություններ առաջարկել: Դուք վճարում եք Սերվիսին պարգևավճար Ձեր կարգադրմամբ գործողությունների համար՝ կապված Ձեր մասին տեղեկատվության տեղակայման, պատվերների մասին տեղեկության տրամադրման և Ձեր առաջարկների՝ հաճախորդներին ուղարման հետ:

Վարձատրության գումարը սահմանվում է Սերվիսի կողմից տրամադրված ծառայությունների ընդհանուր ծավալով և միշտ կապված է կոնկրետ հաճախորդների, յուրաքանչյուր պատվերի մասնագիտացման և պարամետրերի հետ.

- հաստատված պատվերի պարգևավճարը (լրավճարը) վճարվում է Ձեր՝ հաճախորդի պատվերով ծառայությունների մատուցման մեկնարկից հետո.
- չհաստատված պատվերի պարգևավճարը (լրավճարը) վճարվում է, եթե հաճախորդը որոշել է պառասխանել Ձեր առաջարկին կամ դիտել է Ձեր արձագանքը պատվերին:

Ընդհանուր կանոնով պարգևավճարը (լրավճարը), Սերվիսի կողմից գանձվող, կազմում է առաջին անցկացրած պարապմունքի ամբողջ գումարը, որը

վճարվում է դասուցույցին (առաջին պարապմունքը կազմակերպում է Սերվիսը առցանց ռեժիմով դասախոսի և ուսանողի համար հարմար ժամանակին): Եթե պատվերը նախատեսում է միայն մեկ պարապմունք, Սերվիսին պարզևավճարի (լրավճարի) գումարը կազմում է պատվերի գնի 50%-ը: Այն դեպքում, եթե դասուցույցը պատվերի ընդունումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում չի վճարում լրավճարը (պարզևավճարը), Սերվիսն իրավունք ունի արգելափակել դասուցույցի էջը, դրա մուտքի սահմանափակման միջոցով: Էջի հետագա վերականգնումը հնարավոր է պատվերի սկզբնային չափի կրկնապատիկով լրավճարման դեպքում:

Վճարի չափի և ժամկետների մասին տեղեկացվում է անձնական էջով, հեռախոսով կամ այլ հասանելի միջոցներով: Պարզևավճարը (լրավճարը) կարող է շտկվել պայմանագրի կողմերի համաձայնեցմամբ:

Փոխգործունեության կանոններ

Սերվիսը և Դուք միմյանց երաշխավորում եք պայմանագրի կնքման և կատարման համար իրավունքների, լիազորությունների առկայությունը:

Դուք իրավունք ունեք՝

- ծանոթանալու ծառայությունների տրամադրման մասին տեղեկության պայմաններին,
- օգտագործելու ծառայությունները և ընկերության կողմից ներկայացվող լուծումները,
- ընկերությանը տեղեկացնելու պատվերների հետ աշխատանքի բացասական իրավիճակների և հնարավոր խնդիրների մասին:

Տեղեկատվությունն օգուս է հաճախորդների հարցերի, դիտողությունների կամ բողոքների դիտարկման ժամանակ:

Դուք պարտավոր եք՝

- Սերվիսին պարզևավճարն (լրավճարը) իրականացնել 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսանողի հետ աշխատանքի դիմումի և մեկնարկման հաստատումից հետո:

Դուք երաշխավորում եք Ձեր կողմից անհրաժեշտ թույլատվությունների ստացումը ներքոնշյալների տրամաբանական դեպքում՝

- մտավոր գործունեության գործունեության արդյունքների,
- առևտրային տեղեկության,
- երրորդ անձանց մասին տեղեկության:

Դուք երաշխավորում եք պահպանել Սերվիսի կանոնները, մասնավորապես՝

- ներկայացնել հավաստի տեղեկատվություն:
- Անձամբ իրականացնել դասուսուցման ծառայությունները:
- Հաճախորդների (ուսանողների) մասին տեղեկատվությունն օգտագործել բարձարձակապես աշխատանքի կատարման համար: Չփոխանցել հաճախորդների (ուսանողների) կոնտակտներն առանց նրանց համաձայնության:
- Տեղեկացնել հաճախորդներին (ուսանողներին) երաշխավորությունների, հնարավոր ռիսկերի և աշխատանքի արդյունքի համար պատասխանատու անձի մասին: Անհրաժեշտության դեպքում հաստատել անձը, աշխատանքային փորձը և այլ տեղեկատվություն: Պայմանագիր կնքելու առաջարկություն անել, երբ անձամբ Դուք չեք կատարում աշխատանքը և ադրյունքի համար պատասխանատվություն չեք կրում:

- Հայցման դեպքում լրացնել հաշվետվություն և հաստատել անկետային տեղեկատվություն:
- Շփման մեջ լինել կոռեկտ, չխախտել օրենքները և պայմանավորվածությունները:
- Անձնական և այլ՝ սահմանափակ հասանելիություն ունեցող տեղեկատվության գաղտնիությունն ապահովել: Այլ անձանց կյանքի մասին չպատմել, նամակագրությունը և խոսակցության ձայնագրությունները, վեբ-ֆորումից քաղված տեղեկատվությունը չգաղտնազերծել: Դուք իրավունք ունեք կիսվելու տեղակտվությամբ օրենքով թույլատրված դեպքերում:
- Պահպանել հեղինակային իրավունքի և մտավոր սեփականության մասին օրենքների դրույթները: Չտարածել լուսանկարներ, երաժշտական ստեղծագործություններ և մտավոր գործունեության այլ արդյունքներ առանց օրինական սեփականատերերի (իրավատերերի) համաձայնության:
- Կիրառել ընկերության կողմից տրամադրված ծառայություններն ու ծրագրային ապահովումը բացառապես իրենց նպատակով և թույլ չտալ վերջիններիս անբարեխիղճ և հակաիրավական կիրառումը:
- Նորությունների և ծանուցումների մասին իրազեկվել անձնական սենյակում:

Մերվիսն իրավունք ունի՝

- Ստուգելու Ձեր և այլ անձանց կողմից տրամադրված տեղակտվությունը:
- Անկետայի տեղեկատվությունը խմբագրելու և համակարգելու:
- Կապ հաստատելու Ձեզ հետ ցանկացած միջոցով և ձայնագրելու հաղորդակցումն առանց նախազգուշացմամբ:
- Ծանոթանալու նամակագրությանը և հեռախոսագնգերին, եթե դրանք իրականացված են ընկերության կողմից առաջարկվող լուծումների միջոցով:

- Մերվիսի, անկետայի և անձնական սենյակի մուտքը սահմանափակելու և փակելու,
 - ա) եթե դրանք չեն կիրառվում ըստ իրենց նպատակի,
 - բ) օգտատիրական համաձայնագրի կանոնների խախտման դեպքում,
 - գ) տեխնիկական պատճառներով,
 - դ) ընկերության, իր կապալառուների և օգտատերերի իրավունքների և շահերի պաշտպանության նպատակների համար:
- Ձեր աշխատանքի վերաբերյալ արձագանքների տեղակայման համար պայմաններ ստեղծել: Արձագանքները հրապարակվում են և կարող են համացանցում առանց սահմանափակումների հասանելի լինել, գուգորդվել գնահատականներով և մեկնաբանություններով: Սովորաբար արձագանքը լուսաբանող տեքստը պարունակում է մասնագետի պրոֆեսիոնալ կարողությունների մասին կարծիք, Ձեր հետ աշխատանքի մասին մանրամասներ: Յուրաքանչյուր ոքին երաշխավորվում է մտքի և խոսքի ազատությունը: Ոչ ոք չի կարող պարտադրել իրենց կարծիքն ու համոզմունքներն արտահայտել, կամ վերջիններից հրաժարվել: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատ որոնելու, ստանալու, փոխանցելու, ստեղծելու և տարածելու տեղեկատվություն ցանկանցած օրինական միջոցով:
- Փոփոխություններ կատարելու անձնական սենյակի ինտերֆեյսերի, ընկերության կողմից տրամադրվող փաստաթղթերի լուծումների և պայմանի աշխատանքի ալգորիթմերի մեջ: Հրապարակային առաջարկի և պայմանագրի կողմերի իրավահարաբերությունները կանոնակարգող փաստաթղթերի մեջ փոփոխությունների մասին տեղեկատվությունը հրապարակվում է անձնական սենյակում այլ բաժիններում: Այլ փոփոխությունները գուգորդվում են ծանուցումներով՝ ըստ Մերվիսի հայեցողության:

Մերվիսը երշխավորում է՝

- Ձեր մասին տեղակատվության տարածումը միայն Ձեր համաձայնությամբ կամ այն դեպքերում, երբ նման համաձայնություն չի պահանջվում:
- Գաղտնի տեղեկատվության տրամադրումը խիստ պայմանագրով և օրենքով նախատեսված դեպքերում: Ձեր հետ պայամանագրի կնքումը և ծառայությունների ու սպասարկումների Ձեր կողմից օգտագործումը, համագործակցության դադարեցումը գաղտնի տեղեկատվություն չեն հանդիսանում:
- Ձեղ հետ առաջին պարապմունքի կազմակերպումը տարբեր համացանցային հարթակների օգնությամբ:

Դուք տալիս եք համաձայնություն՝

Պայմանագրի և կիրառվող օրենսդրության պայմաններում Ձեր կողմից տրամադրված տեղեկատվության և Ձեր մասին ստացած ցանկացած տեղեկության մշակման վերաբերյալ: Մշակումը ցանկացած գործողություն (օպերացիա) կամ տվյալների հետ գործողությունների ամբողջությունն է, որպես օրինակ՝ տվյալների հավաքագրում, ձայնագրում, համակարգում, կուտակում, պահպանում, ճշգրտում (թարմացում, փոփոխում), դուրսբերում, օգտագործում, փոխանցում (տարածում, տրամադրում, հասանելիություն), դիմագրկում, արգելափակում, ջնջում, ոչնչացում:

Սերվիսի և իր գործընկերներին առնչվող առանց որևէ սահմանափակումների տեղեկատվության ստացման վերաբերյալ: Որոշ ծանուցումներ հնարավոր չէ անջատել, որպես օրինակ՝ պատվերի կարգավիճակի մասին ծանուցումը, որին Դուք արձագանքել եք:

Համացանցում Ձեր անկետային տեղակայման վերաբերյալ, որը կարող է պարունակել հետևյալ տեղակատվությունը.

- Ձեր անունը, ազգանունը, հայրանունը, տարիքային խմբի մասին տեղեկությունը,

- աշխատանքային փորձի և որակավորման, ռեյտինգների և պարզևների մասին տվյալները, Ձեր և Ձեր աշխատանքին առնչվող լուսանկարները և տեսաձայնագրությունները,
- դասացուցակը, աշխատավայրի բնութագրությունը, աշխատանքների օրինակները,
- անկետայի ստուգման արդյունքները:

Այդ տեղեկատվությունը կարող է փոխանցվել երրորդ անձանց, երբ ընկերությունը հաճախորդներին է ներգրավում՝ գործընկերների կամ գովազդի տեղադրման միջոցով: Այդ դեպքերում Դուք թույլ եք տալիս անհատույց կերպով, առանց սահմանափակումների, այդ թվում նաև առանց անունը, ազգանունը և հայրանունը նշելու և անկետային հղում կատարելու օգտագործել անկետայի տեղեկատվությունը:

Ձեր և Ձեր աշխատանքի մասին այլ տեղեկատվությունը տվյալների նպատակներին համապատասխանող ծավալով փոխանցվում է՝

- հաճախորդներին (ուսանողներին), երբ դուք համաձայն եք դրա հետ,
- Ձեր անկետայի ստուգման համար, ընկերության, իր կապալառուների և օգտատերերի իրավունքների և շահերի պաշտպանության դեպքում,
- երրորդ անձանց, որոնք պահպանում են ընկերության ծառայությունների և սերվիսների աշխատունակությունը,
- միջոցառումների կազմակերպման դեպքում, որտեղ Դուք մասնակցում եք,
- ընկերության մասնակիցներին և ներդրողներին տեղեկատվության հայտարարման դեպքում,
- Ձեր նկատմամբ պահանջների իրավունքների զիջման դեպքում:

Մերվիսն իրավասու է մշակելու Ձեր անձնական տվյալները (այդ թվում անձնական տվյալների մշակման համաձայնության դեպքում) այն իրավիճակներում, երբ այն անհրաժեշտ է ընկերության իրավունքների և օրինական շահերի իրականացման կամ հասարակայնորեն նշանակալի նպատակներին հասնելու համար՝ այն պայմանում, որ տվյալ դեպքերում Ձեր իրավունքներն ու ազատությունները չեն խախտվում: Տվյալների մշակման և պաշտպանության մասին առավել մանրամասն ծանոթացեք «Անձնական տվյալների պաշտպանության քաղաքականության» մեջ:

Հաշվետվողականությունը և կանխավճարի վերադարձն՝ ըստ պայմանագրի

Ընկերության հետ փոխհաշվարկների մասին տեղեկությունը, ինչպես նաև պարզևավճարման միջոցների մասին տեղեկատվությունը հասանելի է անձնական սենյակում: Վճարման ստացման պահին է համարվում այն ժամանակը, երբ ընկերությունը ստանում է վճարման համակարգից (բանկային քարտից, էլեկտրոնային դրամապանակից և այլնից փոխանցման դեպքում) փողի ստացման մասին տեղեկությունը. բանկային փոխանցման դեպքում՝ ընկերության հաշվառման համարին փողերի ստացման պայմանում վճարման մասին տեղեկության ստացման պահը:

Ընկերության պարզևավճարը ներառում է օրենսդրությանը համապատասխան կիրառվող հաստիքով ԱԱՀ-ն: Զեղչերը կիրառվում են ընկերության հայեցողությամբ ակցիաների և մարկետինգային գործունեության դեպքում:

Ծառայությունների մատուցման փաստը հաստատվում է մատուցված ծառայությունների մասին հաշվետվությամբ (հաշվետվությամբ): Դուք

կարող էք հաշվետվություն ձևակերպել անձնական սենյակում և ստանալ իրականացված ծառայությունների և փոխհաշվարկների մասին տեղեկությունը՝ պայմանագրին համաձայն:

Առանց պայմանագրի լուծարման կանխավճարի վերադարձի հայցման գրանցման դեպքում ընկերությունն իրավունք ունի պահել լրավճարը, գործող տարիֆների մասին տեղեկատվությունը տեղակայվում է անձնական սենյակում: Եթե հայցման դիտարկման պահին պայմանագրին համաձայն ծառայությունների վճարման գումարը վերապահված է, կանխավճարը վերադարձվում է վերապահված գումարների պահումով:

Դուք երաշխավորում եք ընկերության ծառայությունների վճարումն՝ ըստ ընկերության հետ կնքված ցանկացած պայմանագրերի, այդ թվում՝ երբ անձնական սենյակի մուտքը սահմանափակված է կամ փակ է Ձեր կողմից կատարված համագործակցության կանոնների խախտման պատճառով:

Դուք ճանաչում եք՝

- տեղեկատվական համակարգի տվյալները հավաստի և վերջնական՝ հնարավոր տարաձայնությունների կանոնակարգման համար,
- ընկերության՝ պարտքերի և Ձեր հեռախոսահամարին կամ էլեկտրոնային փոստին հասցեագրված այլ հայցումների վերաբերյալ ծանուցումների իրավաբանական ուժը՝ գրավոր ծանուցումների հետ հավասար: Ծանուցումների ուղարկման և ստացման ժամանակը, փաստը, բովանդակությունը սահմանվում են ընկերության տեղեկատվական համակարգի տվյալներով.
- հնարավոր անբարենպաստ հետևանքների ռիսկը, եթե ժամանակին չէք տեղեկանում ծանուցումներից կողմերի

իրավահարաբերությունները կանոնակարգող իրավական փաստաթղթերի փոփոխությունների մասին.

- որ Ձեր անձնական ցուցիչներին են վերաբերվում Ձեր անձնական հղումը կամ անձնական սենյակի մուտքագործման մուտքանվան և գաղտնաբառի համադրությունը: Դուք եք ստանձնում Ձեր անձնական ցուցիչների գաղտնիության ապահովման և ընկերության տեղեկատվության պատասխանատվությունը՝ վերջիններիս կորուսման կամ անձնական սենյակում չսանկցավորված մուտքագործման հայտաբերման դեպքում,
- որ Ձեր անձնական սենյակի փաստաթղթերը հավասարազոր են թղթային փաստաթղթերին՝ անձամբ Ձեր կողմից ստորագրված, և ունեն նույն իրավաբանական ուժը, եթե Դուք համաձայնվում եք փաստաթղթերի բովանդակության հետ անձնական սենյակի ինտերֆեյսի միջոցով:

Սահամափակումներ և պատասխանատվություն

Ընկերության ծառայությունները և տեխնիկական լուծումները տրվում են «որպիսին որ կան» պայմաններում՝ առանց աշխատանքում խափանումների բացակայության երաշխավորման:

Սերվիսը հաշվետու չէ՝

- հաճախորդներին կամ այլ անձանց Ձեր գործունեության համար, այդ թվում՝ արդյունքների, որակի և աշխատանքի կատարման այլ պայմանների համար,
- հաճախորդի կողմից հաղորդված տվյալների հավաստիության համար և այլ անուղղակի վնասների. օրինակ՝ շահույթի կորուստի համար:

Դուք ստանձնում եք պատասխանատվություն՝

- ընկերության ծառայությունների, ծրագրային ապահովման և այլ տեխնիկական լուծումների անբարեխիղճ և հակաիրավական կիրառման համար,
- Ձեր կողմից ներկայացված տեղեկության հավաստիության և իրավաչափության համար,
- Ձեր գործունեության վերաբերյալ տեղեկատվության՝ համացանցում տեղակայման արդյունքի համար,
- Ձեր անձնական ցուցիչների չսանկցավորված օգտագործման հետևանքով առաջացած վնասների համար, այն դեպքում, երբ Դուք չեք ապահովել այդ ցուցիչների գաղտնիականությունը:

Պարտավորվածությունների չկատարման և ոչ պատշաճ իրականացման պատասխանատվությունը սահմանվում է պայմանագրին և կիրառվող օրենսդրությանը համապատասխան:

Այլ դրույթներ

Պայմանագիրը համարվում է կնքված պարզ գրավոր ձևով ք. Երևանում անորոշ ժամկետով հրապարակային առաջարկի պայմեններում՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 448-469, 429.1 հոդվածներին համաձայն, Սերվիսի կողմից՝ Ձեր՝ հրապարակային առաջարկի ընդունման պատասխանի ստացման պահից:

Պայմանագիրը կարող է լուծարվել կողմերի փոխադարձ համաձայնության դեպքում կամ ցանկացած կողմի նախաձեռնությամբ միակողմանի կարգով, բոլոր փոխհաշվարկների անցկացման 30 օրվա լրանալուց հետո՝ պայմանագրին համաձայն:

Սերվիսի կողմից փոփոխությունների ներառումը ենթադրում է այդ փոփոխությունների ընդգրկումը կնքված պայմանագրի մեջ:

Փոփոխությունները համարվում են ընդունված Ձեր կամ Ձեր ընկերության կողմից, եթե փոփոխությունների հրապարակումից հետո 14 օրվա ընթացքում ընկերությունը չի ստացել Ձեզնից պայմանագրի լուծարման հայցում: Եթե պայմանագրի կամ առաջարկի որևէ դրույթներ դառնում են չգործող, պայմանագրի կամ առաջարկի այլ դրույթները պահպանում են իրենց իրավաբանական ուժը:

Չկանոնակարգված հարցերի ենթադատությունը սահմանվում է պայմանագրի (պայմանագրի կատարման) գտնվելու վայրով: Վեճը կարող է փոխանցվել դատարան բողոքի ուղարկման օրվանից հետո 30 օրվա լրացման դեպքում, եթե օրենքով այլ ժամկետներ և կարգ չի նշանակված:

Իրավահարաբերությունները կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, եթե այլ բան չի նախատեսված միջազգային օրենսդրությամբ:

ԼԻՑԵՆԶԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Սերվիսի կիրառումը նշանակում է Ձեր կողմից սույն լիցենզիոն պայմանագրի պայմանների ամբողջական և անվերապահ ընդունումը:

Պատվերների որոնման սերվիսն իրենից ներկայացնում է պատվերների որոնման և համագործակցության օպտիմիզացիայի համար ծրագրային ապահովում (ծրագիր): Ծրագրի իրավատերն է «ՅՈՒՐԻՅ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Անհատ ձեռնարկատեր (ԱՁ), ՀՎՀՀ 20241495»-ն:

Իրավատերը պարզ (ոչ բացառիկ) լիազորման պայմաններում ծրագրիին օգտագործելու իրավունք է տալիս՝

- անձնական սենյակի միջոցով, ինտերֆայսերի (ծրագրի գրաֆիկական մասի) համակարգիչների և բջջային սարքավորումներու էկրաններին վերարտադրման միջոցով,
- ծրագրի գործարկման սահմաններում աշխարհի բոլոր երկրների տարածքներում,
- պայմաններում «որպիսին որ կան», առանց ծրագրի աշխատանքում խափանումների բացակայության երաշխավորման,
- օգտագործման անհրաժեշտ պայմաններն են՝
 - 1) միացումը համացանցին,
 - 2) մուտքն անձնական սենյակ,
 - 3) պարտավորվածությունների պահպանումը:

Ծրագրի օգտագործումը չի թույլատրվում՝

- նման օգտագործման իրավունք չունեցող անձանց,
- հաճախորդների որոնման և պատվերներով համագործակցության հետ կապ չունեցող տեղեկատվության տարածման համար,
- անբարեխիղճ և հակաիրավական գործողությունների իրականացման համար:

Պարտավորվածությունների չիրականացման կամ ոչ պատշաճ իրականացման պատասխանատվությունը սահմանվում է կիրառվող օրենսդրությանը համապատասխան:

Ծրագրի օգտագործման վիճակագրությունը ամրագրվում է ավտոմատ ռեժիմով իրավատիրոջ կողմից:

Լիազորագիրը տարածվում է ծրագրի հետագա բոլոր թարմացումների և նոր տարբերակների վրա, եթե այլ կարգ չի նախատեսված լրացուցիչ կերպով: Ծրագրի բոլոր կամ որոշ հնարավորությունները կարող են լինել սահամափակ կամ անհասանելի՝ ըստ իրավատիրոջ հայեցողության:

Լիցենզիոն պայմանագիրը համարվում է ծրագրի իրավատիրոջ և Ձեր կողմից կնքված պարզ թղթային ձևով ք. Երևանում Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 1106 հոդվածին համապատասխան ծրագրի օգտագործման պահից սկսած: Իրավատերն իրավունք ունի լիցենզիոն պայմանագրի մեջ փոփոխությունները ներառելու միակողմանի կարգով:

Փոփոխությունների մասին ծանուցումները հրապարակվում են անձնական սենյակում նորությունների բաժնում և ուժի մեջ են մտնում հրապարակման ամսաթվից (տարեթվից) սկսած, եթե այլ կանխապայման դրված չէ:

Չկանոնակարգված վեճերի ենթադատությունը սահմանվում է իրավատիրոջ (պայմանագրի կատարման) գտնվելու վայրով: Վեճը կարող է փոխանցվել դատարան բողոքի ուղարկման օրվանից հետո 30 օրվա լրացման դեպքում, եթե օրենքով այլ ժամկետներ և կարգ չի նշանակված:

Իրավահարաբերությունները կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, եթե այլ բան չի նախատեսված միջազգային օրենսդրությամբ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընկերությունը գրանցված է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: